

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ՆԱԽԵՐԳՈՒԹԻՒՆԸ
ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

R E N O U N C E M E N T

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
1992

Զ Օ Ն

Հայ աղօթակից հաւատացեալներու, որոնց հոգիները կը տենջան հոգեխառնուիլ միջնադարեան աղօթողներու լուսաւորեալ և սրբաբոյր ոգեկան ներհայեցողութեան:

Այն որոնող ուխտաւորներուն, որոնք կը փնտռեն կեանքի երջանկութիւնը հոգեկա՛ն և բարոյակա՛ն սպառազինութեան և սրբակենցաղ ապրումներու իրականացումին մէջ:

Ալպէո Նորատունկեան
Հոկտ. 10, 1992
Թորոնթօ

Մ Ո Ւ Տ Ք

Եկեղեցին՝ Յիսուս Բրիստոսի անսեսանելի ներկայութեան

շօշափելի ու տեսանելի հողն է՝ կալուածը: Եկեղեցին է, որ կը ծնի հաւատացեալները, կը դիեցնէ, կը դաստիարակէ և նաեւ կը պաշտպանէ գիրենք չարին բոլոր փորձութիւններէն ու հրապոյրներէն:

Մուրք Պատարագի հաղորդութեան նախերգանքը կ'սկսի վերանորոգելով դարերու ուխտը մեր հաւատացեալ նախահայրերուն: Որպէս եղբայրներ, լծակիցներ, աջակիցներ, մէկ ձայ եկեղեցւոյ ուխտեալ զաւակներ, հրապարակաւ և ներշնչումի ուղիղ հայեցակէտով որոտանք չարին դէմ.

«Հրաժարիմք 'ի Սատանայէ՝ և յամենայն խաբէութենէ նորա,
'ի պատրանաց նորա,
'ի խորհրդոց նորա,
'ի գնացից նորա,
'ի չար կամաց նորա,
'ի չար հրեջտակաց նորա,
'ի չար պաշտօնէից նորա,
'ի չար կամարարաց նորա և յամենայն չար գօրութենէ նորա՝
հրաժարելով հրաժարիմք:»

Ալ պէ՛ռ նորատունկեան
Հոկտ. 10, 1992
Թորոնթօ

Հ Ի Ա Ժ Ա Բ Ո Ւ Մ Ն

Դրական ու վճռական արարք մը, գրաւոր թէ բերանացի, ամբացնելու անձի մը գործօն դիրքաւորումը, որով ան կը յայտնէ և կը խոստովանի իր *ազատ* կամքը հեռանալու գործէ կամ գաղափարականէ մը:

Հրաժարում կամ հրաժարիլ, որ կը կարծուի բուպէական ըլլալ, իրականութեան մէջ իրագործում մը կիրարկում մըն է ան, որ ենթական պարտի գործադրել իր կեանքի *բոլոր* տեսողութեան:

Օրինակ:

- 1.--Այն անձը, որ մոլի է ծիսելու կամ ալբոլի, երբ կ'որոշէ հրաժարիլ զայն գործածելէ, պարտաւոր է երբեք չհաղորդուիլ կրկին: Ան՝ իր կեանքի բոլոր ընթացքին փորձութիւնը պիտի ունենայ համտեսելու զանոնք, սակայն հարկ է իրեն հեռանալ սոյն տղամաթաւ կիրքերու բունկումներէն:
- 2.--Մարդ արարածը կրնայ հրաժարական ներկայացնել ընկերակցութենէ մը և հեռանալ ընդմիջտ անոնց բարի կամ չար գործունէութենէն: Սակայն չարամտութեան և անբարեխղճութեան բազմաբնոյթ գործունէութեան գահակալը՝ Սատանան երբեք չի թողլատրեր մարդ արարածի հրաժարումը իր տխրահոգակ գործակալութենէն: Չարը շարունակ դարանակալ կը սպասէ.

«Սատանան վերջացուցած ըլլալով բոլոր փորձութիւնները՝ ժամանակի մը համար հեռու մնաց անկէ (Յիսուսէ)»

--Ղուկ. 7.13:

«Արթո՛ւն կեցէք, հսկեցէ՛ք, քանի որ ձեր ոտիսը՝ Սատանան, կը մոնչէ առիւծի մը նման, կը շրջի և կը փնտռէ թէ զո՛վ կլլէ» --Ա. Պետ. Ե.8:

ԿՐԱԺԱՐԻՄՔ 'Ի ՍԱՏԱՆԱՅԷ

Վերոյիջեալ անկեղծ յայտարարութիւնը հաւատացեալի մը հաւատքին ամենապերճախօս խոստովանութիւնն է: Զրիաստուի Եկեղեցին, որ երկրի վրայ երկնային ու հոգեւոր հայրենիքն է

իւրաքանչիւր հաւատացեալ Քրիստոնեայի, յարմարագոյն և իտեալական վայրն է, ուր մարդ արարածը, միացած իր հաւատակիցներու համայն ներկայութեան, կը յայտարարէ իր հրաժարումն ու ուրացումը Սատանայի գործակալութենէն:

Դարանակալ Սատանան չի կրնար համարձակիլ, դպչիլ ոեւէ հաւատացեալի, երբ ան կանգնած է իր Փրկչին սրբազան Հոռի՛ն՝ Եկեղեցիին մէջ: Հրաժարումի բառերու արտասանութեամբ, հաւատացեալը կը նորոգէ իր հրաժեշտի ուխտը, մարմնական ցանկութիւններէ՝ ազահութենէ և *մարմնի աստուածացումէ*: Ամէն Կիրակի ներկայ ըլլալով Ա. Պատարագի և հոգեկան սնունդ ստանալով, մարդ էակ կը տեսականացնէ և կը գորացնէ իր դիմադրողականութիւնը հանդէպ չարին ոլորապտոյտ և սարսփազրու ճիրաններուն:

ԴՒՍԱՆԱՅԷ

"Սատանա" բառը փոխառեալ է Ասորերէնէ և եբրայերէնէ, որ կը նշանակէ "հակառակորդ, ընդիմադիր, չարախօս, մատնիչ և թագաւորի դէմ ապստամբ մատնիչ":

Սատանայի մասին յօրինուած է ժողովրդական բազմաթիւ առասպելներ և հեքիաթներ: Գրականութեան և գեղանկարչութեան մէջ, ան ներկայացուած է կոտորշաւոր և պոչաւոր անձոունի՝ չարը ներկայացնող մարդակերպ հրեջտակ:

Հին Կտակարանին մէջ "Սատանա" անունը յիշուած է միայն երեք անգամ, որպէս անձնանուն գերմարդկային էութեան:

1.--Չափարեայ Գ.1-2՝ «Եւ Տէրը ինձի ցուցուց մեծ քահանան Յեսուն, որ Տէրոջը հրեշտակին առջեւ կայներ էր, ու Սատանան անոր աջ կողմը կայներ էր՝ անոր դէմ դնելու համար: Եւ Տէրը Սատանային ըսաւ, Տէրը քեզ յանդիմանէ, ով Սատանայ, ու քեզ Երուսաղէմը ընտրող Տէրը յանդիմանէ միթէ ասիկա կրակէ հանուած խանձող չէ՞»:

2.--Յոբայ Ա.2՝ «Օր մը Աստուծոյ որդիները գացին Տէրոջը առջեւ կայնելու, ու Սատանան ալ գնաց անոնց մէջ Տէրոջը առջեւ կայնելու»: Եւ Տէրը ըսաւ Սատանայի, Ուրկէ՞ կու գաս. ու Սատանայ պատասխան տուաւ Տէրոջը ու ըսաւ, Երկրի վրայ շրջելէն ու անոր մէջ պտրտելէն»

3.--Ա. Մնացորդաց ԻԱ.1՝ «Եւ Սատանայ Իսրայէլի դէմ ելաւ, ու Դաւիթը դրդեց որ Իսրայէլը համրէ»:

Այս երեք հատուածներն ալ գրուած են յետ Բաբելոնեան Ախարի, այսինքն՝ 539 նախաՔրիստոս թուականէն վերջ: Նախ քան չրեաներուն գաղթական տարուիլը դէպի Բաբելոն, "Սատանայի" պատկերացումը չրեական մտատեսութեան մէջ որպէս *անն նայան* եութիւն գոյութիւն չ'ունէր: Որպէս յատկանշական և զանազանիչ՝ չարին անուանական պետը, դերակատարը, գրուիլ սկսաւ Բաբելոնի գերութեան ջրջանին:

Չրեութեան բացարձակ Միաստուածութիւնը չէր կրնար թոյլատրել հակառակորդ գոյութիւն մը, թշնամի կամ դաւաճան, որ ջանայ մրցակից դառնալ Աստուծոյ: Այսպիսի մտատիպար հոգեկերպով, Եսայեայ մարգարէն կը գրէ իր ԽԵ. գլուխ 6-7 համարներուն մէջ ըսելով.

«Ես եմ Տէրը, և ուրիշ մը չկայ,
Ինձմէ զատ Աստուած չկայ.
Որպէս զի արեւելքէն ու արեւմուտքէն գիտնան
Որ ինձմէ զատ մէ'կը չկայ.
Ես եմ Տէրը, և ուրիշ մը չկայ:
Լոյսը հաստատողը և խաւարը ստեղծողը,
Խաղաղութիւնը ընողը ու չարիքը ստեղծողը,
Այս ամէն բաները ընողը ես Տէրս եմ»:

70 տարի Բաբելոնեան գերութեան ջրջանին, չրեայ դպիրներ (աստուածաբան) երբ շփման մէջ մտան Զրադաշտականութեան կրկնապաշտութեան (dualism) խորհրդաբանութեան՝ զիրենք անհանգիստ ընող չարին կնճռոտ իրողութիւնը իրենց մտքին և ըմբռնումին աւելի հեջտ եկաւ: "Սատանա" անունը հրեական կրօնքին մէջ կը նշանակէ "չարախօս և հակառակորդ":

Քրիստոնէական կրօնքին մէջ է, որ Սատանան կը նկատուի որպէս գերբնական էակ, բոլորովին անկախ և *աստուածամարտ*. Մոլորեցուցիչ և ապստամբ, որ մարդկութիւնը կը գրգռէ Աստուծոյ դէմ ու կը կոչուի բանաարկու և Բեհեդգերուդ:

Նոր Առակարանի մէջ Սատանան կը ներկայացուի, որպէս աշխարհի բովանդակ Տէրը և հեղինակը բոլոր չարեաց:

Յիսուս Բրիստոս կ'ըսէ.

«Կը տեսնէի Սատանան, որ կ'իյնար երկինքէն փայլակի նման: Ահաւասիկ իշխանութիւն տուի ձեզի կոխելու օձերը, կարիճները և թշնամիին ամբողջ զօրութիւնը, և բոլորովին պիտի չվնասեն ձեզի»--Ղուկ. Ժ.19:

«Հիմա՛ է այս աշխարհի դատաստանը, հիմա՛ է որ այս աշխարհի իշխանը դուրս պիտի նետուի»--Յով. ԺԲ.31:

«Կուգայ այս աշխարհի իշխանը, և ան իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն ունի»--Յով. ԺԴ.30:

«Սատանան ըսաւ Յիսուսի. "քեզի պիտի տամ այս ամբողջ իշխանութիւնը և ասոնց փառքը, որովհետեւ ինձի տրուած է, և որուն որ ուզեմ՝ կու տամ զայն»--Ղուկ. Դ. 6:

Պօղոս առաքեալ կ'ապացուցանէ թէ Սատանան էր որ նենգութեամբ մոլորեցուց մեր նախնայր եւան.

«Բայց վախնամ թէ մի գուցէ, ինչպէս որ օձն իր խորամանկութեամբ խաբէց եւան, ձեր միտքը ապականի Քրիստոսի հանդէպ»--Բ. Կորնթ. ԺԱ.3:

Նոր Կտակարանի մէջ Սատանան կը ներկայանայ որպէս չարին ուրոյն դերակատարը և ապստամբութեան անձնաւորութիւնը: Ան կրնայ ներթափանցել մարդկային հոգւոյն նուիրական և թափուն ներհնաբերող և մոլորեցնել ենթական:

«Ապա Սատանան մտաւ Իսկարիովտացի կոչուած Յուդայի մէջ»--Ղուկ. ԻԲ.3:

Յիսուս, «Թաթխելով պատառը՝ տուաւ Իսկարիովտացի Յուդային: Եւ պատառը առնելէ յետոյ, սատանան մտաւ անոր մէջ»--Յով. ԺԳ.26-27:

Սատանան կը ներկայանայ նենգամտութեամբ և խաբէութեամբ, որպէս ճշմարտութեան և արդարութեան ջահակիրը և ջատագովը.

«Անոյկա զարմանալի չէ՛ Բանի որ Աստանան ինձ ալ լուսեղէն հրեշտակի կերպարանձ կ'առնէ»--Բ Կորնթ. ԺԱ.14:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս անվախօրէն դիմակազերծ ըրած է Սատանան ըսելով կեղծաւորներուն.

«Դուք ձեր հօրսէն՝ Սատանայէն էք և ձեր հօր ցանկութիւնները կ'ուզէք կատարել, որովհետեւ ան ի սկզբանէ մարդասպան էր և ծշմարտութեան մէջ չմնաց, քանի որ ծշմարտութիւն չկայ անոր մէջ»--Յով. Ը.44:

Արդի նիւթապաշտ հոգեբանական տեսութիւնը, Սատանան և անոր գաղափարականը անջատած են իրական կեանքի երեւոյթներէն: 20րդ Դարու սոյն "յառաջդիմական" վերացական դրութիւնը՝ մեծագոյն յաղթանակը դարձած է Սատանային համար: Այսուհետեւ ան կը գործէ աւելի համարձակօրէն, որովհետեւ մարդիկ իր գոյացութեան չեն հաւատար...: Զգուշանալու կամ ինքզինք ծածկելու պարտաւորութիւն մը չ'ունի այլեւս:

Մակայն սուրբերն ու իրենց անձերը Աստուծոյ ծառայութեան նուիրած արդարացածներ, թէ՛ անցեալին և թէ՛ ներկայիս, կը վկայեն Սատանայի *ատարկացման*, գոյութեան, ազդեցութեան և խաբէական դերակատարութեանը մարդոց մէջ:

Եկեղեցին ու հաւատքը մեր նահատակներուն անմար թափօրն են: Հայաստանեայց Եկեղեցոյ նահատակ սուրբերը, պաշտպանելու համար ծշմարիտ հաւատքը, սպաննուեցան Սատանայէ խաբուած տարբեր կրօնաւորներէ, որպէսզի դուն և ես ճանչնանք *անձ նաւորու ած* չարը և չթոյլատրենք անոր մուտքը մեր հոգիներէն, խորհուրդներէն և մտածումներէն ներս, այլ՝ ըսենք համարձակօրէն

«Հրաժարիմք Դ Սատանայէ»

ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ԽԱՔԵՐԱԵՆԷ ՆՈՐԱ

Քախտախաղի մէջ մարդիկ կը կորսնցնեն հազարներ:

Առեւտրական գործառնութեան մէջ կը կրեն միլիոնաւոր տոլարներու վնասներ: Սոյն բոլոր վնասներն ու կորուստները չեն զայրացներ զիրենք այնքան, որքան Բանի մը հազարի խաբէական անիրաւութիւնը: Մարդոց զայրոյթը այն ատեն կը բորբոքի երբ տեսնան թէ իրենք խաղալիկը եղած են կեղծ խաբեքայութեան:

Խաբեքայութեան մէջ միշտ դիմացինը որսալու և թակարդելու միտում մը, ձգտում մը կայ: Խաբուող անձ մը, որքան ալ

նիւթական կորուստի ենթարկուի, վնասը չէ՛ որ զինք կը բռնկեցնէ, այլ ամօթապարտութիւնը՝ *խաբուած* ըլլալու:

Խաբել՝ նաեւ կը նշանակէ հալածել և դաւաճանել (նենգութեամբ դարան լարել): Խաւարի գործունէութեան ինքնայայտութիւնը կեղծել և սուտը որպէս ճշմարտութիւն ներկայացնել կամ հաւատացնել է: Բազմաթիւ գեղանկարներ կան, որոնք իրականին կեղծ նմաններն են, կրնան գեղեցիկ ըլլալ, բայց ո՛չ իրականը: Բազմահազար կեղծ թղթադրամներ կան, որոնք ջրջան կ'ընեն առեւտուրի տարածքին վրայ: Մեզմէ ո՞վ կ'ուզէ զանոնք ստանալ կամ պահել:

Ի ՊԱՏՐԱՆԱՑ ՆՈՐԱ

Խաբեական խօսք կամ գործ, որ արտաբուստ ճշմարիտ և հրապուրիչ կ'երեւայ, իսկութեան մէջ ծուղակ և որոգայթ է: Համայնակար վարչակարգին *անպարտելիութեան* զօրութիւնը (պատրանք)ը ցնդեցաւ:

Մարմնի զգայարաններ կրնան սխալ առաջնորդել ենթական: Մարդ էակը որոնելու ու գտնելու է մնայուն և անփոխարինելի արժէքները: Աստուածայի՛ն որոնումը, մատնանիջ կ'ընէ մարդուն՝ ճշմարիտը և բարին, որ ո՛չ երէկ ունի, ո՛չ այսօր և ո՛չ ալ վաղը, այլ՝ յաւիտենական Լոյսէ կ'ստանայ իր մշտաճառագայթ ուժը:

Աստանային պատրանքը կը նմանի աւազոտ անապատներու մէջ ճամբորդող ուղեւորներու աչքին երեւցած կրկներեւոյթներու: Հորիզոններէն դուրս գտնուող ամպերը կ'երեւին օդի՛ մէջ՝ ջրջուած ձեւով, կարծես պաղպաջուն ջուրի ովասիսներ ըլլային: Ողորմելի ուղեւորներ, ծարաւէ նուաղած, շտապելով կը մօտենան, սակայն միրածը կը ցնդի ու իրենք կը կորսուին:

Արբակենցաղ հոգեւորականը, Ա. Պատարագի մուտքին, կ'զգուշացնէ իւրաքանչիւր հաւատացեալ ուղեւորը ՀՐԱԺԱՐԻՄԱԶ-ով, որ ան զգոյշ ըլլայ գեղեցիկի և բարոյականի ձեւագեղծումներէն: Բարիի և չարի տարբերութիւնները ջատ աւելի մեծ են քան նմանութիւնները: Մարդկութիւնը, դժբախտաբար, այսօր կ'ապրի սուտի և կեղծիքի աշխարհակալութեան ներքեւ: Քաղաքական, տնտեսական և կենցաղավարական լուրերը՝ պսակաւոր կեղծաւորներու, ծուրովի գկադեմականներու և խախուտ դիւանագետներու ձեռքը խաղալիկ դարձած են:

Աստուծոյ նման ըլլալու գաղտնիքը՝ **սէ՛րն** է, գերմարդկայինը, ծառայասիրութիւնը, գոհաբերութիւնը և ճշմարտութեան ճամբան:

Ի ԽՈՐՏՐՈՒՄԻՆ ԵՒ ԼՈՐԱ,

Խորհուրդները մարդկային *աշխարհ* արդիւնաբերութիւնը կամ անոր արտադրութիւնները չեն: Մարդ էակին ուղեղը տիեզերքի համակարգէն արձակուած խորհուրդները հիւրընկալող ընկալուչն (receiver)ն է: Բարի և չար, սուտ և ճշմարիտ, սուրբ և պիղծ խորհուրդներ կը բզզան մարդ արարածին ջուրջ և կը ջանան պատկերանալ և մարմնանալ անոր մտատեսութեան պաստառին վրայ: Կենցաղական յղփանքի ցոփ ու ջուայտ խորհուրդները այնպիսի Բայբայիչ ուժեր դարձած են այսօր, որ բազմատեսակ երեւոյթներու տակ կը *պարտադրեն* իրենք իրենց կամքը: Կենդանի անասունները կը փնտռեն միայն *կերակուր*, և *ցանկութիւն* իսկ մարդ արարածը կը տենչայ գեղեցկութեան, արդարութեան և ճշմարտութեան: Մարդ էակը, կենդանի գազաններէն զատորոշող դրութիւնը՝ անոր *ազատ կամքն* է: Ճահիճներու Բովէն երբ անցնինք, միջատներ և մժեղներ կը խուժեն մեր վրայ, ծծելու համար մեր հեղուկ կենսանիւթը: Միթէ կը թողլատրե՞նք այդ բզզացող միջատներուն, որ մեզ արիւնաբամ ընեն: Ո՛չ: Զանոնք կը վանենք և կամ կ'սպաննենք: Նոյնն է նաեւ յարձակումը տիեզերական խորհուրդ- ներուն: Կտոչած հաւատքի գորութեան, ինքնապաշտպանութեան կամքը և վերապրելու վճռակամութիւնը յարատեւ մահառումով կը ջանայ զանազանել և յայտնաբերել ճանապարհը կեանքի, ճշմարտութեան և լոյսի: Ենթական ի՛նք՝ ի՛ր ազատ կամքով պիտի ընտրէ բարոյացուցիչն ու թելադրականը, կամ անձնատուր պիտի ըլլայ ցոփութեան, վայրագութեան և նիւթապաշտութեան:

Ի ԳՆԱՅԻՑ ԵՒ ԼՈՐԱ

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս երբ այս երկրին վրայ էր, Ինքզինք նմանցուց կեանքի և ճշմարտութեան ճանապարհ գնացին: Ամբարտաւան մարդկութիւնը կը ջանայ կապկել

երեխաներու "ես գիտեմ"ութիւնը: Իրենց հպարտ յոխորտանքը զիրենք կ'առաջնորդէ դէպի ոլորապտոյտ յորձանուտը ուր միայն մահը պիտի դիմաւորէ զիրենք:

Իսաչեցեալ Որդի Աստուծոյն ճանապարհը կը հրաւիրէ Իր հետեւորդները ծառայութեան, զոհաբերութեան, անյիշաչարութեան, սիրոյ, սրբութեան և գոհացուցիչ կենցաղավարութեան:

Մատանային ճանապարհը (գնացք) ցոյց կու տայ թող հաւատացեալին հրապուրիչ կենցաղավարութիւնը պարի, կերուխումի, զեխութեան, մարմնի զգացական հաճոյքի և դէպի մարմնի աստուածացումը: Մինչդէռ Հայ հաւատացեալներ իրենց մարմիններով վառեցին Աւետարանի ջահը, լուսաւորելու համար Արարատեան աշխարհի սիրտը, ցոյց տալու համար բարձունքի, սրբութեան և վսեմութեան Մարմնացումը: Սոյն նուիրական ճանապարհով հաւատացեալներու մարմինները *տաճարացա՛ն*, որպէս Տիրոջ տաղաւար:

՚Ի ԶԱՐ ԿԱՄԱՑ ԵՈՐԱ

Յիսուս Զրիստոս առանձինն էր անապատին մէջ երբ

Մատանան փորձեց Զինք: Առանձինն էր երբ կոխկոտեց Քալիլիոյ ծովուն ալիքները օգնութեան հասնելու համար Իր աշակերտներուն: Ան առանձինն էր նաեւ Գեդսեմանի Պարտեզին մէջ երբ աղօթեց ըսելով.

**«Հա՛յր իմ, եթէ կարելի է, թող այս բաժակը անցնի
ինձմէ, ապա թէ ոչ՝ կը խնդրեմ գայն, քու կա՛մքդ
թող ըլլայ»--Մատթ. ԻԶ.42:**

Մեր Տէրը բաջ գիտէր չարին դաւաճանի հոգիով լիցճաւորուած կեղծաւորները: Ան ակնաստես եղաւ համատարած կեղծիքներու, սուտերու և խախուտ բարեկամութիւններու: Փարիսեցիք, Մարդկեցիք թէեւ հիացան Նազովրեցի Մարգարէ Յիսուսի, սակայն իրենց սրտին մէջ ատեցին Զայն: Իրենց անձնակեդրոն, փառամոլ և նիւթապաշտ հոգին չթոյլատրեց, որ խոնարհին և յանձնեն իրենց կամքը դարերէ ի վեր յուսացուած անպարտելի Ազատարարին:

Յիսուս Զրիստոսի նախանձողները զոհ գացին իրենց սին կամքին: Մարդ էակը՝ իր *ազատ կամքոյ* կը պատժէ և կը կորսնցնէ

իր էութիւնը՝ իր ապրելու և գոյատեւելու պարգեւը-- **յաւիտենական կեանքը**:

Ի ԶԱՐ ԿՐԵՇՏԱԿԱՑ ՆՈՐԱ

Ներկայ մարդկութիւնը և Բաղաճակրթութիւնը չի հաւատար հրեշտակներու գոյութեան, միջամտութեան և պաշտպանութեան, ըլլան անոնք բարի՝ կամ չար: Ակսեալ 16րդ Դարու Բարեկարգութենէն, հրեշտակներու գաղափարը աւելի *բանաստեղծական* թե՛ փոքր ստացաւ Բան թէ առարկայական: Մարդիկ՝ որքան յառաջացան մեքենական հնարագիտութեան մէջ, այնքան անջատուեցան ու հեռացան հոգեկան ասպարէզէն: Մոռցան հոգեկան զօրութիւնը և անտեսեցին հոգեփոխուիլ և հոգեխառնուիլ Յարուցեալի ապրումի ու զոհողութեան հոգիին: Արդի մարդը դարձաւ նիւթապաշտ, պատահականութեան խնկարկող և բիրտ: Նիւթի պաշտամունքը դարձուցին գերակշիռ ու դարձան տգրուկներ՝ նիւթականի փառքով սնած: Իրենց յիշողութենէն վանեցին հոգիին զօրութեամբ հակակշռել միտքն ու սիրտը:

Ես հաւատացողն եմ հրեշտակներու գոյութեան և անոնց միջամտութեան: Մեր Տէրը Յիսուս հաւաստիօրէն ջեշտած է հրեշտակներու (բարի և չար) գոյութիւնը, անոնց սպասաւորութիւնը և օգնականութիւնը հանդէպ մարդկութեան:

1.--«Որդին Մարդոյ պիտի գայ Իր Հօր փառքով՝ Իր հրեշտակներուն հետ միասին. և այն ատեն իւրաքանչիւրին պիտի հատուցանէ ըստ իր գործերուն» --Մատթ. ԺԶ.27:

2.--«Զգո՛յ՛ջ եղէք, որ այս փոքրիկներէն մէկը չարիամարիէք. կ'ըսեմ ձեզի, որ անոնց հրեշտակները երկնքի մէջ շարունակ կը տեսնեն երեսը իմ Հօր, որ երկինքն է»-- Մատթ. ԺԸ.10

3.--«Եւ ահա Տիրոջ հրեշտակը եկաւ կեցաւ վերելք, ու լոյս մը ծագեցաւ այդ տեղին վրայ: Ապա խթելով Պետրոսի կողը՝ արթնցուց զայն և ըսաւ. "եղի՛ր, շո՛ւտ...կապէ՛ գօտիդ և հողաթափներդ ոտքերդ անցուր...հագուստներդ վրայ առ և եկո՛ւր իմ ետեւէս»: Եւ ան ելլելով կ'երթար անոր ետեւէն»-- Առաք. ԺԲ.7-9:

4.--«Եւ Տիրոջ հրեշտակը երեցաւ անոնց, Տիրոջ փառքը

ծագեցաւ անոնց վրայ, և անոնք սաստիկ վախցան: Եւ հրեշտակը ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք, որովհետեւ տառապանիկ ճեզի կ'աւետեմ մեծ ուրախութիւն մը...: Եւ յանկարծակի այդ հրեշտակին հետ երեւցաւ երկնային զօրքերու բազմութիւն մը, որ կ'օրհնէր զԱստուած ու կ'ըսէր. «Փա՛ռք Աստուծոյն՝ բարձունքներու մէջ, և խաղաղութի՛ւն երկրի վրայ ու հաշտութի՛ւն՝ մարդոց մէջ»--Ղուկ. Բ. 9-15:

Ինչպէս Յիսուսի Ծնունդը յայտնաբերուեցաւ հրեշտակներու երկնամեղեդի համերգով, նոյնպէս Անոր Երկրորդ Գալուստը պիտի փողահարուի հրեշտակներու որոտումով:

5.--«Այն ատեն պիտի տեսնեն մարդու Որդին՝ եկած ամպերու վրայէն զօրութեամբ և մեծ փառքով: Եւ այն ատեն պիտի դրկէ իր հրեշտակները ու պիտի հաւաքէ իր ընտրեալները չորս կողմերէն, երկրի ծագերէն մինչեւ երկնքի ծագերը» --Մարկ. ԺԳ.26-27:

Ինչպէս բարի հրեշտակներ կան, որոնք կ'սպասաւորեն Աստուծոյ, նոյնպէս ալ կան չարին ծառայող հրեշտակներ, դեւեր և չար հոգիներ: Ներկայիս վերոյիջեալ բառերը հոլովուելով ու շրջուելով դարձած են պարզ ոճեր: Օրինակ՝

Ներհայեցութիւն, ներմղում, ներջնչում, ոգեւորութիւն, ոգեղէն դրութիւն, ոգեկան աշխարհ, զգացումներով ոգեջնչուած, նախճեւոտող ոգի կամ դարաշրջանի ոգին, եւլն.

Մոռացութեան և լուրթեան դատապարտուած են դիւահարութիւնը, այսահարութիւնը և դիւահարցութիւնը կամ դիւահմայութիւնը (դեւերու օգնութեամբ հմայութիւն ընել): Վերոյիջեալ բառերը կը գործածուին մի միայն շղային հիւանդութեանց սահմանումին և բնորոշման համար: 20րդ Դարը՝ հոգեկանութիւնը վերագրած է *բնազդի, զգացութեան, մտապատկերի, յիշողութեան, երեւակայութեան, զգացմունքի, խառնուածի, բնաւորութեան, ընդունակութեան եւլն.*

Հոգեբանութիւնը կ'զգուշանայ հարց տալէ և պատասխանելէ, թէ այդ հոգեկանութեան կամ հոգեգիտութեան բուրմերը (հոգեբանները), որո՞ւն և ի՞նչ զօրութեան կը վերագրեն *սկզբնաւորումը՝ սկզբնապատճառը* և դրդապատճառը այդ "հիւանդութիւն" կարծուած հիւանդութիւններուն: Հրեշտակներ, ոգիներ և դեւեր՝ փիլիսոփայական հասկացո-

դուժիւններ չեն միայն, այլ իրական և ճշմարիտ երեւոյթներ, որոնց ներկայ անասուած և նիւթապաշտ հաւաքակա՛ն "գիտնականներ"ը կը ջանան իրենց նիւթականացած բարբերուն առաջնորդել համայն մարդկութիւնը: Կեանքը՝ իր իսկութեան մէջ *հոգեւոր*: է և բարոյական սկզբունքներով կը կառավարուի: Բարոյագուրկ Բաղաբականութեան անբարոյ ըմբռնումներուն զոհ կ'երթայ ներկայ սերունդը:

Նայի՛նք Յիսուսի, բարութեան, ծառայութեան և նուիրումի ոգիով օժտուած Արտի մը՝ աստուածայայտնիչ Մարդեղութեան: Բաղթատեցէ՛ք Ձայն ներկայի գեղծարար դիւանագէտներու և *ազգային* Բաղաբագէտներու հետ, որոնց միակ տենչը փառամոլութիւն և ընչաբաղցութիւն է:

Յիսուս Քրիստոս բարոյական իմացումներով և Աստուածազգաց ապրումով Բարոզեց ու սորվեցուց Իրեն հետեւողներուն: Իրողութեան բարձրագոյն դրսեւորումները յայտնաբանեց Ան Իր անուս սակայն պարզ ու սրտաբաց աջակերտներուն: Անկեղծ ու սրտով մաքուրները աստուածաբարբառ առաքեալներու փոխակերպեց:

«Արումներու Առակով, Լուսեղէն Մարմնացումը դրսեւորեց մարդկային մտածողութիւնը, գգացողութիւնը, երեւակայութիւնը և խառնուածքը ու զայն վերագրեց չարին դարանակալութեան, դաւաճանութեան և անհաւատարմութեան:

Տեսնենք թէ Յիսուս ի՞նչ կ'ըսէ չար հրեշտակներու նկատմամբ.

«Անիծեալ նե՛ր, հեռացէ՛ք ինձմէ դէպի յաւիտենական կրակը, որ պատրաստուած է Աստանային և իր հրեշտակներուն համար»--Մատթ. Ի2.41:

Պօղոս առաքեալ որ նահատակուեցաւ ճշմարտութեան, սրբութեան և իր Տիրոջ Յիսուսի համար, սապէս կը վկայէ.

«Վստահ եմ թէ ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանութիւնները և ո՛չ ուրիշ բաներ որ հիմա կան, ո՛չ գալիքները, ո՛չ զօրութիւնները...կրնան բաժնել մեզ Աստուծոյ այդ սէրէն՝ որ կայ մեր Տէր Քրիստոս Յիստոսով»--Հռոմ. Ը.38-39:

Վերոյիջեալ անջատող և բաժանարար զօրութիւնը և իշխանութիւնը, Պօղոս առաքեալ կը վերագրէ չարին և անոր գործակալ հրեշտակներուն: Առաքեալը, ընդմիջտ վանելով սուտի և կեղծիքի իշխանութիւնը, կը ջարուսակէ դիմակազերծել անոր գործունեութիւնը ըսելով.

«Ատիկա զարմանալի չէ, քանի որ Աստանան ինք ալ լուսեղէն հրեշտակի կերպարանք կ'առնէ: Տարօրինակ չէ ուրեմն որ անոր պաշտօնեաներն ալ կերպարանաւորուին իբրեւ արդարութեան պաշտօնեաներ, որոնց վախճանը իրենց գործերուն համաձայն պիտի ըլլայ»--Բ. Կորնթ. ԺԱ.14-15:

Պետրոս առաքեալ ալ կը պատմէ չար հրեշտակներու մասին, որոնք դաւաճանելով Աստուծոյ սրբութեան, կողմնակցեցան Աստանային և անոր փառամոլական ձգտումներուն.

«Քանզի Աստուած մեղանչած հրեշտակներուն իսկ չիւնայեց, այլ խաւարի կապանքներով նետեց տարտարոսը, որպէսզի անոնք պահուին դատաստանի օրուն համար»
--Բ.Պետ. Բ.4:

Յուդա առաքեալ ալ կ'եկրորդէ Պետրոս առաքեալը և կ'ապացուցանէ, թէ բոլոր չար հրեշտակները, որոնք կը մոլորեցնեն մարդկութիւնը և կը կեղծեն սուտը որպէս ճշմարտութիւն, անվերապահօրէն դատապարտուած են կորուստի և կրակի.

«Այն հրեշտակները որոնք չպահեցին իրենց իշխանութիւնը, այլ լքեցին իրենց բնակութեան տեղը, յախտնական կապանքներով խաւարի մէջ պահեց մեծ օրուն դատաստանին համար»--Յուդա 7րդ համար

Յայտնութեան Գրքին մէջ, ծերունազարդ առաքեալ Յովհաննէս, բազմաթիւ հալածանքներ ու չարչարանքներ կրելէ յետոյ կը գրէ եօթը եկեղեցիներու հաւատացեալներուն որպէսզի զգոյշ ըլլան չար հրեշտակներու սուտ խորհուրդներէն.

«Իրենց վրայ իբրեւ թագաւոր ունէին դժոխքի հրեշտակը, և անոր անունը երբայեցերէն Աղբադոն էր, որ հայերէն լեզուով կը կոչուի՝ Կորուստ»--Յայտ. Թ.11:

Տիեզերական մեծագոյն պատերազմը տեղի պիտի ունենայ բարի և չար հրեշտակներու կայծակնաբոց բախումով, և պիտի վերջանայ Աստուծոյ Թագաւորութեան յաղթանակով: Այս վիթխարի պատերազմը՝ պայքարը պիտի վճռէ յաղթութիւնը բարիներու և սուրբերու, նահատակներու և զրկեալներու: Վերոյիջեալ պայքարամարտին որպէս փոքր մէկ նմոյշ, Յայտնութեան գիրքը կը նօթագրէ.

«Երկնքի մէջ կռիւ եղաւ: Միքայէլ և իր հրեշտակները կը կռուէին վիշապին հետ. վիշապը

կը կռուէր իր զօրքերով, բայց անոնք չկրցան
դիմադրել. և երկնքի մէջ տեղ չգտնուեցաւ
անոնց համար: Եւ ինկաւ մեծ վիշապը՝ առաջին
օձը՝ որ կը կոչուի Բէէղզեբուդ ու Սատանայ որ
մոլորեցուց բովանդակ տիեզերքը. և իրեն հետ
իսկան նաեւ իր հրեշտակները»--Յայտ. ԺԲ.7-9:

Հայ հաւատացեալը եւս հետեւելով Առաքելական և Ուղղադաւան
հաւատքի կ'ըսէ.

**«Հրաժարիմք 'ի սատանայէ՝ և յամենայն
խաբէութենէ նորա,
'ի պատրանաց նորա,
'ի խորհրդոց նորա,
'ի գնացից նորա,
'ի չար կամաց նորա,
'ի չար հրեշտակաց նորա,
'ի չար պաշտօնէից նորա,
'ի չար կամարարաց նորա և յամենայն չար
զօրութենէ նորա՝ հրաժարելով հրաժարիմք:**

Թորոնթօ, 1992